Դպրոցները բացելու կոմիտե

Հունիսի 23, 2020

կեսօրից հետո ժամը 4:00, Զում ծրագրի միջոցով

Ներկաները. Մերա Նիման, Մաթ Հիլլ, Ջոն Պարամո, Շերոն Քուսեռ, Փիտր Քնապիկ, Սալլի Չյու, Տամի Շերն, Լուիս Այալա, Նադալի Ջոնս (Ջոն Բրոզ միջնակարգ դպրոց), Մարթա Ուոլտերս, Թոնի Ֆրանկո, Քելլի Դանկլ, Դեբբի Կատկա, Շարլին Ուոլտերս, Դագ Գուտիերես, Էմիլիո Յուրիոստե, Դեբբի ՄքՀորնի, Լենորա Ագիլերա, Լոռի Լիթլ, Չառ Թաբեթ, Ռիկ Վոնկ, Լիսա Ռալուի, Գրեգ Միլլեր, Սու Քանուեյ, Ռոբին Անդերս, Ռեբեկա Միլաուսկի, Քյաթի Սեսինգհաուս, Շերի Բրկհարթ, Լարրի Քրոս, Կայլի ՄքԴանալդ, Ստեյսի Քաշման, Ստեֆանի Ֆիլդց, Վենդի Հարվել, Թոմ Քրաուտեր, Ջեն Գոլդենբերգ, Սյուզի, Ինգրիդ

Ենթակոմիտեներ և նախագահներ.

- Դասավանդում – Շերոն Քուսեռ
- Սոցիալ հուզական – Ջոն Պարամո
- Ընտանիքի/համայնքի ներգրավվածություն – Փիտր Քնապիկ
- Գործող, առողջապահական և անվտանգության բաժիններ – Դեբբի Կակտա

Մաթ – բարի գալուստ, նորություններ Կալիֆոռնիայի բյուջեի վերաբերյալ

Փիտր Քնապիկ - ընտանիք/համայնք

- Զեկույց ծնողներին ուղարկված հարցաթերթիկի արդյունքների վերաբերյալ, մոտավորապես 2500 պատասխան ենք ստացել տարրական և միջնակարգ դպրոցների յուրաքանչյուր խմբից, վերջին օրը ուրբաթ է, որի պատճառով դեռ պատասխաններ կստանանք:
- Գերատեսուչն ավելացրեց, որ պատասխանները միայն ծնողների կարծիքը հարցնելու համար է:
- Հաճախակի տրվող հարցերը (FAQs) մշակվում են կոմիտեի անդամների և ադմինիստրատորների կողմից և կուղարկվեն ընտանիքներին հինգշաբթի օրը, փորձնական տարբերակը տեղադրված է Գուգլում – Դպրոցները բացելու կոմիտե → Ընտանիքի և համայնքի ներգրավվածություն → փորձնական օրինակ (Draft FAQ)
- Խումբն աշխատում է դպրոցները բացելու կայքը ընդլայնելու և մինչև հուլիսի 1-ը պատրաստելու համար:

Շերոն Քուսեռ – դասավանդում

- Դասավանդման մոդելի նկատառումներ.
    - Դասասենյակներում եղած տեղը
        - Այլընտրանքային օրեր կամ առավոտյան/կեսօրից հետո մոդել, որը կկանխարգելի երեխաների շփումը իրար հետ ճաշի ժամին
    - Աշակերտների և ուսուցիչների հաճախակի շփման ցանկություն, առավոտյան/կեսօրից հետո մոդելը թույլ է տալիս այս շփումը շաբաթը 4 օր
    - Երեխաների խնամք
- Փոփոխված դասացուցակ (Block schedule), 2 կամ 3 դասընթացի մոդել 6-ից 9 շաբաթ տևողությամբ

- Ուսուցիչների պլանավորման օրը հեռակա ուսուցման օր կհանդիսանա աշակերտների համար: Քննարկում եք, թե որը կլինի այն՝ երկուշաբթի, չորեքշաբթի, թե՞ ուրբաթ: Յուրաքանչյուն ունի իր լավ ու վատ կողմերը: Ուրբաթ ավելի լավ կլինի ծնողների համար, եթե ցանկանան այդ օրը ազատ մնալ: Չորեքշաբթի օրը լավ կլինի, քանի որ դադար կհանդիսան և կնվազեցնի հոգնածությունը:
    - Քննարկում տեղի ունեցած կոմիտեի անդամների միջև, թե ո՞ր օրն ավելի կլինի ազատ օր ունենալու համար:
- Շերոնը խոսեց հեռակա ուսուցման այլ տարբերակների մասին - APEX 6-12-րդ դասարանների համար, Կանվաս (Canvas), և այլն (նրա ձայնն ընդհատվում էր և ես չկարողացա լսել ամեն ինչ)
- Եթե 3 դասընթացի մոդելը օգտագործվի, ապա այն կլինի կիսամյակի մեկ կեսի համար, հետո 3 այլ դասընթաց՝ մյուս կեսի համար:

Ջոն Պարամո- սոցիալ հուզական

- Դպրոցի խորհդավարական և աշակերտական կենտրոնները լավ են կազմակերպված անձամբ և հեռակա մոդելով աշխատելու համար:
- «Երկրորդ քայլ» ծրագիրը տարրական և միջանկյալ դպրոցի համար
- Կոմիտեն խոսեց վերջերս կատարված «Սև կյանքը նշանակություն ունի» շարժման սոցիալ հուզական կողմի վերաբերյալ, հոգեբանները հղումներ են հատկացրել կայքերում տեղադրված նյութերի համար
- Ավելի շատ ռեսուրսներ ավելացնել ռեսուրսների կայքերում, ներառնելով Հատուկ ուսուցումը
- Աշակերտների ներկայացուցիչները ցանկանում են օգնել մյուս երեխաներին շարունակել «Սև կյանքը նշանակություն ունի» թեման, պետք է աջակցել անչափահասներին ներգրավել սոցիալական արդարության մեջ

Դեբբի Կ. – Գործող բաժին, առողջապահություն և անվտանգությունն

- Շինություններ
- Տեխնոլոգիա
- Սննդի ծառայություններ
- Առողջություն և անվտանգություն
- Նահանգապետը խոստացել է 60 օրվա պարագաներ, որոնցից են դիմակները, ձեռքերի ախտահանիչը և այլն:
- Դիմակները պարտադիր կլինեն, բացի մի քանի բացառություններից, ԲԴՄՇ-ն պետք է լրացնի մնացածը
- Աշխատում ենք այն ուղղությամբ, թե ինչպես զեկուցել յուրաքանչյուր տարածքի վերաբերյալ
- Պետք է որոշել, թե չափելու ենք արդյոք բոլորի ջերմությունը: Եթե այդպես է, պետք է սարքավորում պատվիրել:
- Ի՞նչ է լինելու, եթե ջերմությունը չափելիս հասկանանք, որ ինչ որ մեկը ջերմություն ունի:
    - Պետք է տեղ հատկացնել, երեխային այստեղ պահելու համար, մինչև ծնողը տուն տանի նրան:
    - Սպասում ենք նաև հրահանգների, թե ինչպե՞ս/ե՞րբ ջերմությունը կարելի է/պետք է չափել և նաև ինչ ախտանշաններ պետք է հաշվի առնել: Արդյո՞ք միայն ջերմությունը

ունենալը կերաշխավորի 14 օրվա կարանտին: Կամ էլ ի՞նչ ախտանշաններ պետք է լինի (օրինակ՝ ջերմությունը կարող է ատամի վարակից):

- Խմելու ջրի շատրվաններ – պետք է հաճախակի ախտահանել, դրանք պետք է գործեն, պետք է հիշել Վիլիամի ակտը, հուսով ենք, որ շատրվանները շշի մեջ ջուր լցնելու հնարավորություն կունենան և կքաջալերենք բոլորին դպրոց բերել ջրի շշեր, շիշ չունեցող աշակերտներին կհատկացնենք բաժակներ
- Շինություններ – ունեն դիմակներ, ձեռքի ախտահանիչներ, փնտրում ենք ձեռքի ախտահանման ստվարաթղթե հարմարանքներ, Մաթը ցանկանում է ավելի մշտական լուծում գտնել
- Սննունդ վաճառող մեքենաներ – բավականին մեծ եկամուտ է բերում – եթե որոշենք, որ դրանք աշխատելու են, կարո՞ղ ենք ախտահանման հարմարանքներ տեղադրել դրանց կողքին:
- Մաքրել առավոտյան/կեսօրից հետո հերթափոխներից հետո – հեշտ չի լինելու
- Տեխնոլոգիա – փորձում ենք պարզել, թե ինչպես օգտագործենք յուրաքանչյուր դասասենյակի փաստաթղթերի ֆոտոխցիկները՝ դասերը համացանցում ուղիղ եթերով ցույց տալու համար
- Տեղամասային այցեր ֆիզիկական հեռավորությունը ստուգելու համար, նշումներ կատարել գետնի վրա, փնտրում ենք տեղ, թե որտեղից կարող ենք ֆիզիկական ցուցումների միջոցով պահպանել անվտանգ հեռավորություն

Հարց ծագեց, թե արդյոք փաստաթուղթ կա, որտեղ նշված են կոմիտեների բոլոր ժողովները:

Մաթը խնդրեց Սալլիին կազմել բոլոր ժողովների ցուցակը: